
**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ**

Նախաճառի Անահիտ

ՀՀ ԳԱԱ Փրկիստփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2025.19օր-11

Համառոտագիր: Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և դատական պրակտիկայի (իրավական դիրքորոշումների) միասնակության ապահովման վերաբերյալ տեսական և կիրառական ասպեկտները: Հոդվածում հիմնավորվում է այն տեսակետը, որ 2021-2022 թթ. օրենսդրական փոփոխությունները որոշակիորեն նպաստում են, որպեսզի Վճռաբեկ դատարանը կատարի իր առաքելությունը նշված ոլորտում: Բայց միևնույն ժամանակ ընդգծվում է, որ կան դեռևս խնդիրներ օրենսդրական դաշտում և պրակտիկայում, որոնք պետք է համարժեք լուծումներ ստանան սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

Բանալի բառեր՝ դատաիրավական բարեփոխումներ, դատական պրակտիկա, օրենսդրություն, սահմանադրական փոփոխություններ, նորմատիվ իրավական ակտ, արդարադատություն:

Հայաստանի Հանրապետությունը դատաիրավական բարեփոխումների շրջադարձային փուլում է. 2021-2022 թվականներին կատարվեցին օրենսդրական հսկայական փոփոխություններ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում,

ընդունվեցին նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, որոնք կոչված են բարելավելու և բարձրացնելու դատական իշխանության հեղինակությունը, արդարադատության արդյունավետությունը, դատավորների մասնագիտական որակները, ինչպես նաև մտցվեց կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացված դատարանների համակարգը՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն հանցագործությունների քննության պալատ: Նախատեսվում է նաև դատավորների թվակազմի ավելացում, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացում և այլն:

Անվիճելի է, որ ցանկացած նոր բարեփոխում պետք է էականորեն տարբերվի նախկին բարեփոխումներից: Ասվածը հատկապես վերաբերում է արդարադատության համակարգին և դատական ակտերին: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ նախկին բարեփոխումների վերաբերյալ միջազգային և ազգային գնահատականները հիմք են տալիս արձանագրելու, որ այդ բարեփոխումները, մի շարք նորամուծություններով հանդերձ, իրենց նպատակին չհասան, անձի իրավունքների և ազատությունների, դատական պաշտպանության արդյունավետությունը չբարձրացավ¹: Մեր կարծիքով, այդպիսի չափանիշների թվին կարելի է դասել դատարանի (դատավորի) անկախության երաշխիքները, անաչառությունը և մասնագիտական գործիմացությունը, արդարադատության որակը, դատական ակտերի և դատական պրակտիկայի հեղինակության և դրանց իրավազորության ուժը, դատարանների թափանցիկությունը և մատչելիության իրավունքը, դատարանների նկատմամբ հասարակական վերահսկողության և վստահության ազդեցությունը և այլն:

Հենց վերոնշված հանգամանքների վրա է ուշադրություն դարձնում 2022-2026 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը: Խոսելով մեզ հուզող հարցի՝ դատական նախադեպի մասին՝ պետք է նշել, որ այն ձևավորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ որպես բարձրագույն դատական ատյան՝ բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի: Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև դատական պրակտիկայի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնել մարդու

¹ Տե՛ս **Ավետիսյան Սերժիկ**, Հայաստանի Հանրապետության դատական համակարգի և քրեական դատավարության զարգացման հիմնախնդիրները: Երևան, 2010, էջ 5:

իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (<< Սահմանադրության 171-րդ հոդված): Նշված նպատակները Վճռաբեկ դատարանն իրականացնում է վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր հրապարակված դատական ակտերը վերանայելու միջոցով:

Այսպիսով՝ << ընդհանուր իրավասության, այդ թվում՝ մասնագիտացված դատարանների համակարգում Վճռաբեկ դատարանն առանձնանում է հետևյալ հատկանիշներով. 1) Վճռաբեկ դատարանը քաղաքացիական, քրեական, վարչական, սնանկության և հակակոռուպցիոն հանցագործությունների քննության արդարադատության ոլորտում հանդիսանում է բարձրագույն ատյան, 2) Վճռաբեկ դատարանն օրենքով սահմանված կոնկրետ գործերով ընդունում է վերջնական դատական ակտ, որը կարող է ունենալ նախադեպային բնույթ, հետևաբար, օրինակելի և պարտադիր լինի մյուս դատական ատյանների համար, 3) Վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքների և մյուս նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 4) Վճռաբեկ դատարանը նաև կոչված է ապահովելու դատական պրակտիկայի միասնականությունը, 5) Վճռաբեկ դատարանը, օրենքով սահմանված կարգով, կոչված է վերացնելու մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ «բարձրագույն դատական մարմին» հասկացությունն ամենևին չի ենթադրում դատական համակարգի տարբեր ատյանների միջև ղեկավարման կամ ենթակայության հարաբերություններ: Վճռաբեկ դատարանը << դատական համակարգի բարձրագույն դատական մարմինն է, քանի որ կայացնում է վերջնական բնույթի որոշում՝ վերաքննիչ դատարանի վճիռների, դատավճիռների և որոշումների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Վճռաբեկ դատարանի ակտերը ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

Մեր կարծիքով՝ << վճռաբեկ դատարանի նորմաստեղծ գործունեությունը (այս բառի տեսական և կիրառական իմաստով, բայց ոչ օրենսդրական առումով) իրականացվում է հետևյալ երկու հիմնական եղանակով. ա) օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և բ) դատական պրակտիկայի միասնականության ապահովման միջոցով:

Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե՝ 1) առկա է իրավունքի զարգացման խնդիր, 2) տարբեր դատական գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել և 3) նորմատիվ իրավական ակտը չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով (ՀՀ դատական օրենսգիրք, 29-րդ հոդված, 3-րդ մաս):

Դատական պրակտիկայի միասնականության ապահովման գործառույթը դեռևս օրենսդրական ամրագրում չի ստացել: Այս առումով հաշվի առնելով մի շարք երկրների (հատկապես ՌԴ Գերագույն դատարանի) փորձը՝ այդ գործառույթը ՀՀ վճռաբեկ դատարանը լիարժեք կարող է իրականացնել, եթե օրենսդրական կարգով ներդրվի, այսպես կոչված «ալենումի» (բարձրագույն դատական ատյանի համաժողովի) ինստիտուտը, որով պարբերաբար (որպես կանոն՝ տարեկան) գումարվում է բարձրագույն դատարանի համաժողով, որում քննարկվում և ամփոփվում է տարեկան կտրվածքով դատական պրակտիկայի նյութերը (տարբեր ոլորտների վերաբերյալ), արտահայտվում են դրական և բացասական (թույլ տրված դատական սխալները՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ճիշտ կիրառման, իրավաբանական փաստերի գնահատման և այլն) կողմերը և դատավորների, ինչպես նաև փորձագետների մասնակցությամբ համընդհանուր համաձայնությամբ ընդունված պարզաբանումները, մեկնությունները, իրավադրույթները, դատական նորմերը (նախադեպերը, իրավական դիրքորոշումները, հանձնարարականները և այլն), որոնք կապահովեն դատական պրակտիկայի միասնականությունը և կբարձրացնեն արդարադատության արդյունավետությունն ու որակը:

Իրավակարգավորումների ոլորտում օրենսդրական բացերի, իրավական անորոշությունների, իրավական նորմերի հակասությունների, դրանց ոչ հստակ ձևակերպումների և այլ թերությունների մեծ մասը բացահայտվում է հենց օրենսդրության իրացման (կիրառման), հատկապես՝ դատարանի կողմից կոնկրետ գործերի քննության և լուծման գործընթացում: Հետևաբար, այդ գործընթացն այնպես պետք է կազմակերպվի (ընթանա), որ դատարանը հնարավորություն ունենա այդ բացերը, հակասությունները և մյուս թերությունները հաղթահարելու համար օգտագործել իր կուտակած և արդեն օբյեկտավորված փորձն ու մասնագիտական հմտությունները: Իրավագիտության և օրենսդրության մեջ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում որպես այդպիսի

իրավաբանական միջոց դիտարկվում է դատական մտավոր բարդ գործունեության արդյունք հանդիսացող դատավարական մեկնաբանությունը, որն ուղղված է կոնկրետ գործեր լուծելիս կիրառվող իրավական նորմի (նորմերի) իմաստի և բովանդակության բացահայտմանը²:

Հաշվի առնելով, որ իրավական նորմերի դատական մեկնաբանման բարդ գործընթացին տիրապետում է միայն գործնական փորձ ունեցող դատավորական խավը, (մեկնաբանությունը սերտորեն կապված է ժամանակակից իրավակիրառության հետ) դատավարագետ Ա.Վ. Ավերինն իրավացիորեն նշում է, որ «Օրենքի մեկնաբանությունը բարդ մտավոր գործընթաց է, որը պահանջում է առնվազն երկու պահանջների առկայություն՝ մարդու կողմից ոչ միայն գործող օրենսդրության, այլ նաև իրավաբանական մեկնաբանության բոլոր կանոնների խորագույն իմացություն. ակնհայտ ուտոպիա է բոլոր քաղաքացիներից պահանջել հասնելու այդ պահանջներից թեկուզև մեկին»³:

Իրավական նորմերի մեկնաբանման հարցում դատավորներին առաջնային դերակատարում վերագրելը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքներով՝ ա) վիճելի իրավական իրադրությունների կարգավորման հիմնական բեռն ընկած է դատարանի վրա, բ) հենց դատարանն է հանդիսանում նման վեճերի լուծման վերջնական ատյանը: Չէ՞ որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն օրենքով սահմանված կարգով, սկզբունքներով և դատավարական արժեքների պահպանմամբ ընդհանրապես իրականացնում է դատարանը, իսկ դրանց պաշտպանությունը վարչական կարգով իրականացվում է միայն օրենքով նախատեսված սահմանափակ դեպքերում և այն էլ՝ վարչական կարգով ընդունված որոշումը միշտ էլ կարող է բողոքարկվել դատարան:

Իրավական նորմի (նորմերի) մեկնաբանության անհրաժեշտությունը ծագում է նախևառաջ իրավական ակտերի արտաքին ձևի մշակման ժամանակ կամ իրավաբանական տեխնիկայի եղանակներ և միջոցներ ընտրելիս, որն իր հերթին կապված է իրավական նորմի բովանդակության, բառային-փաստաթղթային շարադրման և այդ բովանդակության նորմատիվային, հատուկ իրավաբանական արտահայտման ձևերի հետ:

² Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Բացերն իրավունքում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ: Երևան, 2019, էջ 263:

³ Տե՛ս **Аверин А.В.**, Правоприменительная деятельность суда и формирование научно-правового сознания у судей. М., 2003. էջ 172:

Այդ անհրաժեշտությունն առաջ է գալիս այն ժամանակ, երբ օրենսդիրը չի կարողանում իրավական նորմում լիարժեք կամ հստակ ձևակերպել իր մտադրությունը, և դրա կիրառման ժամանակ կարիք է առաջանում պարզաբանել նորմի իսկական իմաստը: Հենց այդ նկատի ունի Ս.Ս Ալեքսենը, երբ առաջարկում է «մեկնաբանում» եզրույթը դիտարկել որպես իրավաբանական տեխնիկայի շարունակություն, որի նպատակն է ապահովել օրենսդրի՝ այդ ակտերում ամրագրված կամքի լրիվությունն ու ճշգրտությունը և այն, թե ինչպես է հարկավոր պարզաբանել ու արդյունավետորեն իրացնել այդ կամքն արտացոլող նորմերը⁴: Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավունքի նորմի իրավաբանական մեկնաբանությունը դատարանին և իրավակիրառ այլ մարմիններին հնարավորություն է ընձեռում լիարժեք բացահայտել և կոնկրետացնել նորմի ողջ իմաստը, իրավաբանական և սոցիալ-քաղաքական բովանդակությունները, սկզբունքներն այն դեպքերում, երբ նորմն ավելի լայն (ընդարձակ) բովանդակություն ունի, քան դրա բառացի կամ տառացի արտահայտությունն է: Այս կապակցությամբ ռուս դատավարագետ Տ.Նասիրովան նշում է. «Իրավական նորմերի հստակությունը կախված է տեքստի արտահայտությունից և ձևակերպումից, դրանց գործառույթներից և նպատակներից»⁵: Լրացնելով այս հեղինակի միտքը՝ Դ.Թումանովը նշում է. «Իրավական... նորմերը տարբերվում են իրենց առանձնահատկություններով, քանի որ քիչ չեն դեպքերը, երբ նորմի իրական իմաստը ոչ լրիվ է համընկնում դրա տառացի, բառային արտահայտության հետ: Որպեսզի հասկանալի լինի նորմի իսկական իմաստը, հաճախ հարկ է լինում դիմել մեկնաբանման տրամաբանական, պատմական կամ պարբերական եղանակներին, որոնց հետևանքով նորմի բացահայտման իմաստը կարող է նեղ կամ լայն լինել դրա տառացի իմաստից»⁶:

Այսպիսով՝ իրավունքի նորմի մեկնաբանման հիմքում առաջին հերթին և գլխավորապես պետք է դրվի դրա ընդհանուր իմաստը, դրա հիմնական նպատակը բնութագրող տարածական մեկնաբանության տեսակը, որովհետև դատարանների կողմից այն իրականացվում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված գործերի քննության ժամանակ ու լրացնում է դրանց բովանդակությունը:

⁴ Տե՛ս **Алексеев С.С.**, Общая теория права. Учеб., 2-е изд. перераб. и доп.-М., **Т.К. Велби**, Проспект, 2008, էջ 576:

⁵ Տե՛ս **Насырова Т.Я.**, Телелогическое целевое толкование советского закона.М., 1958, էջ 11:

⁶ Տե՛ս **В.Д. Туманов**, К критике концепции судейского права// Советское государство и право 1980, №3, էջ 111-117:

Ելնելով օրենքների իրավաբանական որոշակիության սկզբունքների պահանջներից, որն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում՝ ՄԻԵԴ-ը իրավադրույթ է սահմանել այն մասին, որ շահագրգիռ անձինք պետք է հնարավորություն ունենան հենվելու պետության ստանձնած պարտավորությունների վրա նաև այն ժամանակ, նույնիսկ եթե դրանք պարունակվում են ամբողջությամբ ուղղակի գործողություն չունեցող ակտերում: Նշված սկզբունքի այդպիսի գործողությունը կապված է մեկ այլ սկզբունքի՝ պետության կողմից իր վրա վերցված պարտականության իրականացման պարտադիրության հետ: Ըստ որում՝ պետության կամ հանրային իշխանության որոշակի հայեցակարգի հաստատման դեպքում դրանք հակաօրինական կհամարվեն, եթե նահանջում են այդպիսի քաղաքականությունից կամ վարքագծից: Չէ՞ որ վերջիններիս հաստատումը ֆիզիկական անձանց այդպիսի քաղաքականության կամ վարքագծի սպասումների հիմք է տվել⁷:

Վերը նշվածը ցույց է տալիս, որ թեկուզև ռոմանագերմանական իրավական ընտանիքում դատական պրակտիկայի (դատական նախադեպի) համար իրավական մեկնաբանությունն իրավաստեղծման միջոց չէ, բայցևայնպես, որպես լրացուցիչ միջոց՝ այն լրացնում է դատարանի իրավակիրառ կամ մեկնաբանական գործունեությունը, փոխհատուցում է ձևական իրավաբանական աղբյուրների անկատարությունը:

Իրավական համակարգի և իրավունքի զարգացման գործում կարևորագույն դեր կարող են կատարել պաշտոնական (աուդենտիկ) մեկնաբանությունները, որոնք կատարվում են նորմատիվ ակտն ընդունած (ակտը հրատարակող) մարմնի կողմից, սակայն դա ՀՀ-ում, ըստ մեզ, անհարկի տեղի չի ունենում: Մեզանում գերազանցապես ընդունված են ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նորմատիվ ակտերի (իրավական նորմերի), դրանց դրույթների սահմանափակ կամ տարածական կամ սիստեմատիկ (համեմատական) մեկնաբանությունները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կատարվող, այսպես կոչված, լեգալ մեկնաբանությունները, որոնցից առաջին երկուսը պարտադիր են (որոշ իմաստով՝ դատական նախադեպի նշանակություն ունեն) ՀՀ բոլոր դատական ատյանների և դրանց հասցեատերերի համար (Դատական օրենսգիրք, ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ

⁷ St'u Court of Justice of the Europeanb Communities (CJEC) judgment of 4 December 1974// Reports of Cases Before the Court-p. 1337:

հողված), իսկ երրորդը՝ և՛ դատական, և՛ բոլոր պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (Դատական օրենսգիրք, ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդված 4-րդ մաս, ՀՀ Սահմանադրական դատարանի մասին ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդված 4-րդ մաս, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 32-րդ հոդված):

Պետք է նշել նաև, որ պարտադիր են ոչ միայն Սահմանադրական դատարանի՝ ըստ էության ընդունած մեկնաբանությունները, որոնցով դատարանի կողմից կիրառված օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, այլ նաև այն որոշումներում կատարված մեկնաբանությունները, որոնցով դրանք ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող. որոշման եզրափակիչ մասում բացահայտվել է կիրառված օրենքի կամ այլ իրավական ակտի սահմանադրաիրավական ակտի բովանդակությունը, սակայն սահմանադրական դատարանը մեկնաբանել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք 428 4 հոդված 1-ին մասի 1-ին կետ):

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Հետևաբար, ինչպես ցույց տրվեց նաև վերևում, Հայաստանը, ipso facto և առանց հատուկ համաձայնագրի, ընդունել է նաև Եվրոդատարանի որոշումներում մեկնաբանման և կիրառման հարցերով արտահայտված դիրքորոշումները: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 32-րդ հոդվածի ուժով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իրավունք ունի լուծել Կոնվենցիայում և դրան կից արձանագրության մեջ նշված բոլոր հարցերը, որոնք վերաբերում են մեկնաբանմանը և կիրառմանը: Դրանք Հայաստանում պարտադիր բնույթ ունեն՝ չնայած որ ՀՀ նախկին դատական օրենսգիրքը (հոդվ. 14-րդ) դրանց պարտադիր ուժի վերաբերյալ հակասական նորմ էր պարունակում: Գործող ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասից իրավացիորեն հանվել է այդ հակասական դրույթը և թողնվել է միայն ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունների վերաբերյալ դրույթը՝ ըստ որի

նույնանման փաստերով, այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը: Մեր կարծիքով՝ ներկայումս դատական նախադեպի կիրառման նշված շրջանակը միայն Վճռաբեկ դատարանի մեկնաբանություններով սահմանափակելն իրավացի է:

Իհարկե, դա ամենևին էլ չի նշանակում, որ մնացած դատարաններն իրենց վարույթներում քննվող գործերով իրավունքի նորմի մեկնաբանություններ չեն կատարում: Այսպես կոչված պարտադիր մեկնաբանություններ իրականացնում է միայն ՀՀ վճռաբեկ դատարանը, որն էլ, Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, բայց իրավունքի նոր նորմեր չի ստեղծում:

Այսպիսով՝ վերը նշված դասարանները կարողանում են օպերատիվ և արդյունավետ ձևով հաղթահարել իրավական բացերը, իրավական նորմերի միջև եղած հակասություններն ու այլ թերությունները՝ դրանով իսկ բարձրացնելով իրավակարգավորումների որակը:

ВОПРОС ЕДИНООБРАЗНОГО ПРИМЕНЕНИЯ ЗАКОНОВ И ДРУГИХ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ КАССАЦИОННЫМ СУДОМ РА И ОБЕСПЕЧЕНИЯ ЕДИНООБРАЗИЯ СУДЕБНОЙ ПРАКТИКИ. ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ АСПЕКТЫ

Налбандян Анаит

*Соискатель Института Философии, социологии
и права Национальной академии наук РА*

Аннотация. В этой статье автор подробно обсудил теоретические и прикладные аспекты, связанные с единообразным применением законов и других нормативных правовых актов и обеспечением единства судебной практики (правовых позиций) Кассационным судом РА. В статье обосновывается мнение, что законодательные изменения 2021-2022 гг. в определенной степени способствуют тому, чтобы Кассационный суд выполнял свою миссию в указанной сфере. В то же время в статье подчеркивается, что все еще существуют проблемы в законодательной сфере и на практике, которые должны получить адекватные решения в контексте конституционных и судебно-правовых реформ.

Ключевые слова: судебно-правовые реформы, судебная практика, законодательство, конституционные изменения, нормативно-правовой акт, правосудие:

**THE ISSUE OF UNIFORM APPLICATION OF LAWS AND OTHER
NORMATIVE LEGAL ACTS BY THE COURT OF CASSATION RA AND
ENSURING UNIFORMITY OF JUDICIAL PRACTICE.
THEORETICAL AND APPLIED ASPECTS**

Nalbandyan Anahit

*Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law at the National Academy of Sciences
of the Republic of Armenia*

Summary: In this article, the author thoroughly discussed the theoretical and practical aspects related to the uniform application of laws and other normative legal acts and the uniformity of judicial practice (legal positions) by the Court of Cassation RA.

The article justifies the point of view, that the legislative changes from 2021 to 2022 contribute to a certain extent, so that the Court of Cassation can fulfill its mission in the mentioned field. At the same time, the article emphasizes, that there are still problems in the legislative field and in practice, which should receive adequate solutions in the context of constitutional and judicial reforms.

Keywords: judicial and legal reforms, judicial practice, legislation, constitutional amendments, normative-legal act, justice.

*Հոդվածը գրախոսվել է՝ 16.12.2024թ.
Ներկայացվել է պաշտոնաթղթով՝ 25.12.2024թ.*